ծովեզրեայ գաւառների հետ: Աւանց գիւղը երկու մղոնով միայն հեռու է քաղաքից: Նա ամբողջապէս հայաբնակ է եւ ունի մօտ 300 տուն հայ բնակիչներ, որոնց գլխաւոր պարապմունքն է նաւարկութիւն եւ ծովի ջրերից «բորակէ կոչուած աղը գոյացնելը: Եօթանասուն ընտանիքից աւելի տներ ունէին իրենց սեփական նաւակները ջրերի վրայ: Աւանցիք պարապում էին եւ երկրագործութեամբ. այդ գիւղի այգիները ամենագեղեցիկներն են Վանի շրջակայքում:

Մտնելով գիւղը, հէնց առաջին փողոցում հանդիպեցինք վարպետ Փանոսին, որ մի խումբ գիւղացիներով շրջապատուած, ինչ-որ խօսում էր նրանց հետ: Նա երեւի այնտեղ սպասում էր մեզ:

— Ի՞նչ էք շինում այստեղ, — հարցրեց Ասլանը:

— Եկել եմ «նիսիաներ» հաւաքելու, — պատասխանեց նա: — Չգիտեմ ի՞նչ պէտք է անել այդ գիւղացիների հետ, բերում են իրանց գործուածքները, ներկել են տալիս, իսկ փողը չեն վճարում: Լաւ է, որ պատահեցիք, պարոն բժշկապետ, — խօսքը փոխեց նա, — դուք երեւի եկել էք այստեղի աղերը հետազօտելու, ուրեմն այսօր այստեղ կը մնաք, եւ եթէ գնալու ցանկութիւն եւս ունենաք, մենք ձեզ չենք թողնի, կը պահենք այստեղ: Գիւղում մի քանի վտանգաւոր հիւանդներ կան, պէտք է նրանց օգնութիւն հասցնել: Առայժմ ձեզ հարկաւոր է մի տեղ՝ հանգստանալու համար:

Երեւում էր, որ վարպետ Փանոսը այդ գիւղում մեծ ծանօթութիւններ ունէր. ամէն կողմից նրան խնդրում էին, որ մեզ իրանց մօտ տանեն, բայց նա տարաւ մեզ մի տուն, ուր, նրա ասելով, հիւանդներից մէկը հէնց այնտեղ էր:

Այդ տունը իր ընդարձակ բակով եւ ծառախիտ պարտէզով ամառոայ համար ամենա յարմար իջեւանը կարելի էր համարել: Նա բոլորովին մօտ էր ծովեզրին եւ առատութեամբ ընդունում էր ծովային հովասուն օդը: Քառակուսի բակը շրջապատուած էր մէկ ու կէս կանգունաչափ քարեայ պարսպով, որը այնքան ցած էր, որ վրայից շատ հեշտութեամբ կարելի էր թռչել: Երեւում էր, որ տան տէրը երկիւղ չունէր գողերի գիշերային արշաւանքից: Բակի մի կողմում, չորս սիւների վրայ կանգնած էր չորս կողմիցն էլ բաց մի ծածկոց, որին կոչում էին «չարդախ»: Նրա տակին ածած էին զանազան մեծութեամբ հին ու նոր տախտակներ, դեռ չսղոցած գերանների կտորներ եւ հիւսնի զանազան ատաղձներ: Այդ բոլորը տեսնելով, առաջին անգամից, այդ տունը հիւսնի արհեստանոցի տպաւորութիւն էր գործում: Չարդախից մի դուռ բացւում էր դէպի փոքրիկ խրճիթը. այնտեղից ուրագի ձայն էր լսւում: Այնտեղ գործում էր ալեւոր արհեստաւորը, բայց նա տան տէրը չէր, նա մի օտարական էր, որին ժամանակաւոր բնակարան էին տոել աշխատելու: